ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ԺԱՄԱՆՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Գայանե Հակոբյան

Սիրիայի հայ համայնքը Մերձավոր Արևելքի ամենահին ու ավանդական համայնքներից մեկն է եղել: Այն վերակազմավորվել է Հայոց ցեղասպանությունից և Կիլիկիայի հայաթափումից հետո: Չնայած սկզբնական փուլի բազմաթիվ դժվարություններին՝ հայ տարագիրները ժամանակի ընթացքում հարմարվել են իրենց ընդունող երկրի քաղաքակրթությանը: Արաբական աշխարհն այն նպաստավոր միջավայրն է եղել, որտեղ հայերը պահպանել են հայկական ինքնությունն ու ինստիտուցիոնալացրել համայնքային կառույցները:

Սիրիայում հայերի գործնական կյանքն ավելի շատ ծավալվել է արաբների միջավայրում: Թեև առօրյա և գործնական կյանքում տեղացիների հետ հարաբերություններում նրանք խնդիրներ չեն ունեցել, սակայն հիմնականում գերադասել են շփվել հայրենակիցների հետ[1]: Կուսակցությունների և եկեղեցու հովանավորության ներքո, ինչպես նաև դրանցից անկախ բազմաթիվ միություններ են գործել Սիրիայում[2]: Միություններից մի քանիսը (Սիրիահայերի Օգնության Խաչ, Սիրիահայերի Երիտասարդական Միություն, Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միություն, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն, Հայ Երիտասարդական Միություն, Նոր Սերունդ և Թեքեյան մշակութային միություններ) ունեցել են իրենց մասնաճյուղերը երկրի տարբեր շրջաններում: «Անոնք ունին մարդասիրական, ընկերային, մշակութային, գրական, մարզական գործունէութիւն, կը պահեն մարզական խումբեր, արուեստի, երգ-երաժշտութեան դպրոցներ, երգչախումբեր, պարախումբեր, սկաուտական խումբեր, որոնք կը կառավարուին մասնաճիւղերու կազմած յանձնախմբային կազմերով: …Կարելի է ըսել, որ սուրիահայ գաղութի բոլոր ընտանիքները իրենց բոլոր կամ մի քանի անդամներով ներ-

---

[1] **Փաշայան Ա., Հարությունյան Լ.,** Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Եր., «Լուսակն» հրատ., 2011թ., էջ 37:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 14-17:

գրաւուած են ոստայնին մէջ»[1]:

Վերը նկարագրվածը հիմք է տալիս ենթադրելու, որ սիրիահայերն իրենց ժամանակի մեծ մասն անցկացրել են հայկական միջավայրում՝ այցելելով տարաբնույթ մշակութային, կրթական և մարզական օջախներ: Սիրիահայ համայնքում ամուր հիմքերի վրա են նաև ազգակցական, ընկերական, հարևանական կապերը, որոնք ամրապնդվել են հաճախակի տունայցելություններով, հյուրասիրություններով և այլն: Այսպիսով, հատկապես Հալեպում, հայերը, կենտրոնացած լինելով հայկական թաղամասերում, ապրել են համայնքային կյանքով՝ ձևավորելով իրենց առօրյա և ժամանցային պրակտիկաները:

Սիրիական պատերազմի բռնկվելուց ի վեր Հայաստանն ընդունել է մոտ քսաներկու հազար սիրիահայերի[2]: Նրանց մեջ այսօր հիմնական մեծ զանգվածը կազմում են հալեպահայերը, ապա՝ Սիրիայի հայաշատ այլ բնակավայրերից (Դամասկոս, Քեսաբ, Կամիշլի, Ռաքքա, Դեր Զոր) եկած մեր հայրենակիցները: Տեղափոխվելով Հայաստան՝ նրանք հայտնվում են թեպետ իրենց հարազատ էթնիկ, սակայն այլ սոցիալ-մշակութային միջավայրում: Համայնքային կյանքով և կոմպակտ ձևով ապրելու հնարավորությունը փոքրանում է, սեփական ազգային նկարագիրը պահպանելու անհրաժեշտությանը փոխարինելու է գալիս նոր միջավայրին ինտեգրվելու անհրաժեշտությունը: Ձևավորվում են ոչ միայն նոր գործնական հարաբերություններ, այլ նաև նոր առօրյա և ժամանցային պրակտիկաներ:

Ժամանցը գրականության մեջ սահմանվում է որպես անձի, խմբի և հասարակության սոցիալական ժամանակի մի մաս, որը կիրառվում է մարդու ֆիզիկական և հոգևոր առողջության պահպանման ու վերականգնման համար: Ժամանցն իր էությամբ լրացուցիչ տարածություն է ստեղծում անձի զարգացման համար և օգնում է նրան՝ լուծելու կենսականորեն կարևոր հիմնախնդիրները, որոնք առաջ են գալիս նոր սոցիալ-մշակութային միջավայրում:

---

[1] **Չոլաքեան Յ.,** Սուրիահայ գաղութը պատերազմէն առաջ, Սիրիահայերը Հայաստանում. ինտեգրման ուղիները: Պատ. խմբ. Կարապետյան Ռ. և Բարսեղյան Ս.: Եր., «Գիտություն» հրատ., 2015, 174 էջ, էջ 31-32:

[2] https://armenpress.am/arm/news/895509/22000-syrian-armenians-re-locate-to-armenia-since-beginning-of-syrian-war.html, 23.06.2017, ժամը՝ 15:58:

Սոցիալ-մշակութային ինտեգրացիայի երևույթը ժամանցի տեսանկյունից վերլուծվում է երկու մոտեցման շրջանակներում.

1. Մշակութաբանական մոտեցման շրջանակներում ուսումնասիրվում է հոգևոր շփման և ժամանցի գործառնման և զարգացման օրինաչափությունները, մեխանիզմներն ու գործոնները միկրոմիջավայրի շրջանակներում: Այն յուրահատուկ տեսություն է, որը պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում սոցիոլոգիական գիտելիքի կառուցվածքային տարրերի, հորիզոնական և ուղղահայաց բոլոր մակարդակների հետ:
2. Սոցիոլոգիական մոտեցումն ուսումնասիրում է ժամանցի սոցիալական էությունը, դրա կառուցվածքն ու հիմնական ֆունկցիաները անձի բազմակողմանի զարգացման գործընթացում: Այն իր մեջ ներառում է այն օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ամբողջական վերլուծությունը, որոնք ազդում են ազատ ժամանակի և ժամանցի, հանգստի բնույթի և բովանդակության վրա, և բացահայտում են ժամանակի անցկացման և ժամանակային չափման տիպերը՝ որպես կարևոր ցուցանիշ:

Ժամանակակից սոցիոլոգիան ժամանցի կոնցեպցիաների լայն շրջանակ է տալիս, որոնք մեծ մասամբ հիմնվում են մակրոսոցիոլոգիական տեսությունների վրա: Սույն հոդվածի շրջանակներում կանգ կառնենք ժամանցի ինտեգրատիվ մոդելի վրա, որը մշակել է ամերիկացի գիտնական Ջ. Կելլին[1]՝ ընդհանրացնելով մինչ այդ գոյություն ունեցող հայեցակարգերը: Նա այդ մոդելում առանձնացրել է երկու տեսական մոտեցում.

1. *Ժամանցի սոցիալական մոդելն* ուսումնասիրում է ժամանցային տարբեր միջոցառումներին սոցիալական խմբերի մասնակցության ձևերը: Այն վերլուծում է մարդկանց ժամանցային գործունեությունն ամբողջության մեջ և նրանց վարքային բնութագրերը:
2. *Էքզիստենցիալ մոդելը* հետազոտության ժամանակ հաշվի է առնում տարբեր սոցիալական գործոնների ազդեցությունը կյանքի ոճի և արժեքային կողմնորոշումների վրա, որոնք պայմանավորում են անհատների զարգացումը:

---

[1] Տե՛ս **Kelly J.,** Leisure and society: a dialectical analysis. Leisure Studies, State College, PA: Venture Publishing, Inc., 1999, էջ 53-68:

Այս երկու ուղղությունները միավորում են ժամանցի կապը մշակութային և ինստիտուցիոնալ գործոնների հետ, որտեղ հետազոտության հիմնական խնդիրը դառնում է հետևյալը՝ նպաստո՞ւմ է արդյոք ժամանցը սոցիալական կապերի զարգացմանն ու անձի կատարելագործմանը:

Ազատ ժամանակի գործընթացը թափանցում է տարբեր սոցիալ-առարկայական ոլորտներ՝ էսթետիկական, սպորտային, քաղաքական և այլն, որպես կանոն, շահերով, պահանջմունքներով, հետաքրքրություններով մոտ մարդկանց շրջանակ: Այն կապված չէ հասարակական պարտավորվածությունների հետ, կառուցվում է ընտրովի, զգացմունքային և վստահելի շփման վրա[1]:

Հայաստանում սիրիահայերի ժամանցի կազմակերպման առանձնահատկությունների ուսումնասիրության նպատակով իրականացվել է էթնոսոցիոլոգիական հետազոտություն՝ քանակական և որակական մեթոդաբանությամբ: Հաշվի առնելով հետազոտական օբյեկտի յուրահատկությունը, բնակության վայրի վերաբերյալ սուղ տեղեկատվությունը, Հայաստան տեղափոխվելուց հետո տարածական ցրված ձևով ապրելը և այլ հանգամանքներ՝ սիրիահայ ընտանիքների հետ կապ հաստատելու համար օգտագործվել է «ձնակույտի» մեթոդը: Կիսաստանդարտացված հարցազրույցի դեպքում հարցվողների սեռատարիքային կազմի ներկայացուցչությունն ապահովելու համար ընտանիքից պատահականորեն ընտրվել է մեկ հոգի՝ ըստ ծննդյան օրվա սկզբունքի, իսկ խորին հարցազրույցներն անցկացվել են՝ ըստ սեռի, տարիքի և զբաղվածության չափանիշների: Ընդհանուր առմամբ, իրականացվել է 184 կիսաստանդարտացված և 36 խորին հարցազրույցներ սիրիահայ ընտանիքների շրջանում՝ Երևանում և մարզերում, մասնավորապես, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Շիրակի մարզերում[2]:

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 1-ից, սիրիահայերի ժամանցը բազմազան է և ընդգրկում է տարբեր ոլորտներ և ուղղություններ:

Հայաստանում սիրիահայերի ժամանցային ձևերի բազմազանության մեջ ամենաշատ տարածվածը ***ընտանիքի և ընկերների հետ*** ժամանակ անցկացնելն է՝

---

[1] **Акимова Л. А.,** Социология досуга.– М., МГУКИ, 2003., էջ 43:

[2] Քանակական հետազոտության մասնակիցների 89,1%-ը՝ Երևան քաղաքի, իսկ 10,9%-ը մարզերի բնակիչներ են:

- տանը՝ ընտանիքի անդամների հետ՝ 21,9%,
- զբոսանք ընտանիքի անդամների հետ՝ 20,5%,
- հյուր գնալ սիրիահայ բարեկամներին, ընկերներին՝ 12,3%,
- զբոսանք ընկերների հետ՝ 11,0%:

Գծապատկեր 1

Սիրիահայերի ժամանցի կազմակերպման ձևերը ՀՀ-ում, %



Փաստացի, սիրիահայերի գերակշիռ մասը (65,7%) իր ազատ ժամանակն անցկացնում է սեփական համայնքի ներսում, մասնավորապես, ընտանեկան և ազգակցական շրջանակներում կա՛մ ակտիվ (զբոսանք), կա՛մ պասիվ (տանը, հյուրընկալություն) ձևով: Այստեղ որոշակի վերապահումով կարող ենք առանձնացնել ընկերներ տարբերակը, քանի որ չի բացառվում, որ վերջիններիս մեջ կլինեն նաև հայաստանցի հայեր: Զբոսանքի ժամանակ ևս չի բացառվում վերբալ հաղորդակցությունը վերջիններիս հետ՝ չհաշված նրանց դիտարկելու, «ճանաչելու» և գնահատելու հնարավորությունը: Ինչպես տեսնում ենք, սիրիահայերի մոտ ժամանցը և վստահելի մարդկանց հետ հաղորդակցությունը մեկտեղվում

են՝ դառնալով կարևոր և նպատակաուղղված գործունեություն նոր սոցիալ-մշակութային միջավայրում:

Զբոսանքի վայրի ընտրությունը թերևս պայմանավորված է նրանց համար հարազատ դարձած և սիրելի վայրերի առկայությամբ՝ Հանրապետության հրապարակ, Օպերա/Կարապի լճի շրջակայք, Կասկադ և «Հաղթանակ» զբոսայգի/Մայր Հայաստան, որոնք դարձել են Երևանի խորհրդանիշներ նրանց պատկերացումներում:

Սիրիահայերի ժամանցի կազմակերպման մեջ որոշակի դեր ունեն նաև ***մեդիա տեխնոլոգիաները՝*** համացանց/սոցցանցեր և հեռուստատեսություն (համապատասխանաբար, 9,6%, 4,8%), որոնք 1/7-րդ մասն են կազմում ընդհանուր ձևերի մեջ: Նրանց կողմից հայկական մշակույթի սպառումը տեղի է ունենում նաև ՁԼՄ-ների, մասնավորապես, հեռուստատեսության շնորհիվ, ուստի անփոխարինելի է վերջիններիս դերը նրանց մշակութային ադապտացիայի գործընթացում: Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ սիրիահայերի շրջանում թեպետ ամենամեծ դիտողականություն (71,0%) ունեն հայկական հեռուստալիքները, սակայն արաբականին հետևողները ևս որոշակի զանգված են կազմում ընդհանուր հեռուստալսարանի մեջ՝ 15,3%: Համացանցի նախապատվությունը պայմանավորված է նախ և առաջ ֆիզիկական հասանելիությամբ և արաբալեզու մամուլի ու ժամանցային նյութերի առկայությամբ, ինչն էլ բավարարում է «սիրիահայկական» կյանքով ապրելու նրանց պահանջմունքը:

Սիրիահայերի շրջանում ***ինտելեկտուալ ժամանցի*** կազմակերպումը համեմատաբար ավելի փոքր հաճախականություն է գրանցել (երաժշտություն լսել, գիրք կարդալ՝ 4,1%, ասեղնագործություն, լուսանկարչություն՝ 4,2%), ինչը, սակայն, անձի ինքնազարգացման և ինքնաճանաչման լայն հնարավորություններ կարող էր ապահովել: Կինոթատրոններ և համերգներ հաճախելու մշակույթը ևս շատ քիչ է տարածված սիրիահայերի շրջանում: Հայաստանում ապրելու տարիներին նրանց միայն 8,7%-ն է երբևէ գնացել ֆիլմեր դիտելու: Պատճառը ոչ միայն և ոչ այնքան ֆինանսական դժվարություններն են, այլև մեծամասամբ ցուցադրվող ֆիլմերի լեզուն՝ ռուսերենը, ընկալելու խնդիրները: Ավագ սերնդի ներկայացուցիչները կարևոր են համարում նաև հոգեբանական վիճակը, որը կապված է անորոշ ապագայի հետ. *«Սիրիայում լավ հեստևել եմ, հաճախել եմ, բայց հիմա էդ տրամադրությունը չկա, էդ պատրաստակամությունը չկա: Մենք հիմա շատ-շատ հոգեպես, ֆիզիկապես ընկճված ենք:*

Որոշ չափով նաև ֆինանսականն էլ է խնդիր, բայց հիմնականը դա չէ» (կին, 58 տ., Երևան)[1]: «*Մի անգամ գնացել եմ կինո, բայց էլ չեմ գնա, որովհետև ռուսերեն է*» (տղամարդ, 32 տ., Երևան)[2]:

Թատրոնների և համերգների պարագայում լեզվական և ֆինանսական խնդիրները երկրորդային նշանակության են դառնում՝ որոշ չափով մեծացնելով նրանց մասնակցությունը մշակութային միջոցառումներին (թատրոններ երբևէ հաճախել են հարցմանը մասնակցած սիրիահայերի 22,8%-ը, իսկ համերգներ՝ 44,6%-ը): Հատկապես համերգների դեպքում ֆինանսական խնդիրն ակտուալ չէ, քանի որ սիրիահայերի մեծ մասը հաճախում է բացօթյա և բարեգործական համերգների: Չնայած ինչքան էլ կարևորում են ինտելեկտուալ ժամանցն ու փորձում են անմասն չմնալ դրանից, ամեն դեպքում, հայաստաբնակ հայերի համեմատությամբ այն դեռևս տարածված չէ սիրիահայերի շրջանում. «*…Եվ կտեսնեմ, որ այստեղի ժողովուրդը բավական սեր ունի թատրոնի, արվեստի, երաժշտության հանդեպ: Մեր մոտ այս բաները քիչ մը ավելի նվազ են*» (տղամարդ, 71 տ., Երևան)[3]:

Սիրիահայերի մոտ, թեպետ փոքր չափով, սակայն զարգացած է նաև ***սրճարաններ/ռեստորաններ այցելելու*** մշակույթը՝ 6,8%: Վայրի ընտրությունը պայմանավորված մի քանի գործոններով, որոնց մեջ կարևոր է, նախ, «սիրիահայկական» միջավայրի առկայությունը, այնուհետև՝ սրճարանների/ ռեստորանների սեփականատերերի կամ աշխատողների սիրիահայ լինելը, ինչպես նաև՝ դրանցից օգտվելու մատչելիությունը:

Ելնելով մեր հետազոտության հիմնախնդրից՝ այն է, թե ինչքանով են սիրիահայերն իրենց ազատ ժամանակի հնարավորությունն օգտագործում այլ սոցիալ-մշակութային միջավայրում նոր սոցիալական կապերի ստեղծման և զարգացման, նոր սոցիալ-մշակութային միջավայրին ադապտացվելու նպատակով, սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշների հետ փոխկապվածության վերլուծությունը նախ ներկայացնենք՝ ***ըստ ժամանցի կազմակերպման միջավայրի.***

1. Սիրիահայերի ժամանց սեփական համայնքի շրջանակներում,
2. Ժամանց սեփական համայնքից դուրս:

---

[1] **Հակոբյան Գ.,** Դաշտային ազգագրական նյութեր, (այսուհետ՝ ԴԱՆ), Երևան, 2014:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

Գծապատկեր 2

Սիրիահայ համայնքի ներսում՝ ժամանցի կազմակերպման ձևերը՝ ըստ սեռատարիքային և զբաղվածության ցուցանիշների, %



Քանի որ գծապատկեր 1-ում նշված ժամանցի ձևերից ոչ բոլորն են հնարավորություն տալիս միանշանակ տարանջատելու սիրիահայ և ոչ սիրիահայ միջավայրերի սահմանները, մենք կանգ ենք առել համեմատաբար հստակ տարբերակների վրա՝ ցույց տալով սիրիահայ համայնքի շրջանակը (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2-ում բերված տվյալներն ակնհայտ կերպով բացահայտում են այն խմբերը, որոնց մոտ, ի համեմատ այլ խմբերի, գերակայում են *սեփական համայնքի շրջանակում ժամանցի* կազմակերպման ձևերը: Նրանք են՝

- Հայաստանում գտնվող սիրիահայերի տնտեսապես ոչ ակտիվ զանգվածը, որի մեջ մտնում են տնային տնտեսուհիները, գործազուրկներն ու թոշակառուները,

- Իգական սեռի ներկայացուցիչները,
- Միջին սերնդի սիրիահայերը:

Ինչպես տեսնում ենք, առանձնացված երեք խմբերում էլ ժամանցի ձևերի մեջ ավելի մեծ կշիռ ունի ամենապասիվ ժամանցը՝ ընտանիքի անդամների հետ տանը ժամանակ անցկացնելու պրակտիկան՝ տնտեսապես ոչ ակտիվ խմբի դեպքում՝ 84,4%, սիրիահայուհիների մոտ՝ 71,9%, իսկ միջին տարիքային խմբում՝ 59,4%:

Ընտանիքի անդամների շրջանակներում ժամանցի պրակտիկան, դուրս գալով տան պատերից և պասիվից փոխակերպվելով ակտիվի՝ զբոսանքի, առաջին հերթին տարածվում է տնտեսապես ոչ ակտիվ զանգվածի, այնուհետև՝ միջին տարիքի, ապա՝ իգական սեռի ներկայացուցիչների շրջանում (զբոսանք ընտանիքով, այցելություն տեսարժան վայրեր՝ ըստ վերը նշված խմբերի, համապատասխանաբար, 60%, 46,6%, 36,7%, տե՛ս գծապատկեր 2):

Առավելապես սիրիահայ կանանց շնորհիվ և տունայցելությունների ձևով (61,1%) ընդլայնվում է ժամանցի կազմակերպման միջավայրը՝ դրանում ներառելով նաև Սիրիայից եկած հարազատներին, ընկերներին: Տունայցելություններն այնուհետև նախընտրում են տնտեսապես ոչ ակտիվ խմբի և վերջում՝ միջին տարիքի սիրիահայերը (համապատասխանաբար, 55,6%, 38,9%, տե՛ս գծապատկեր 2):

Սեփական համայնքից դուրս ժամանցի կազմակերպումը, թեև փոքր հաճախականությանը՝ 3,4% (տե՛ս գծապատկեր 1), ունի իր հստակ արտահայտված ձևը՝ տունայցելություններ Հայաստանում ապրող հարազատներին/ընկերներին, և ըստ սեռի, տարիքի ու զբաղվածության իր նկարագիրը (տե՛ս գծապատկեր 3): Ոչ այնքան ընդգծված տարբերությամբ, սակայն այստեղ ևս առանձնացվել են սիրիահայերի այն խմբերը, որոնց մոտ գերակշռում է սեփական համայնքից դուրս ժամանցի կազմակերպումը.

- Տնտեսապես/սոցիալապես ակտիվ զանգված, որը ներառում է աշխատողներին և ուսանողներին (60%),
- Երիտասարդ և ավագ սերնդի ներկայացուցիչները (հավասարապես 40%),
- Սիրիահայ տղամարդիկ (60%):

Գծապատկեր 3

Սիրիահայ համայնքից դուրս ժամանցը՝ ըստ սեռատարիքային և զբաղվածության ցուցանիշների, %



Ներառելով ժամանցի բոլոր ձևերը՝ շարունակենք վերլուծությունը և ներկայացնենք ըստ սեռատարիքային, զբաղվածության և բնակավայրի ցուցանիշներով տարանջատված խմբերից յուրաքանչյուրին առավել բնորոշ ժամանցային պրակտիկան՝

- Երիտասարդներն ավելի շատ նախընտրում են սեփական համայնքի ներսում տունայցելությունները, միջին տարիքային խումբը՝ համացանցի, իսկ ավագ սերունդը՝ հեռուստատեսության հավատարիմ սպառողներ են (ժամանցի առանձին ձևերի մեջ յուրաքանչյուր խմբի կշիռը, համապատասխանաբար, 44,4%, 64,3%, 71,4%):
- Իգական սեռի ներկայացուցիչները հեռուստացույց դիտողների բացարձակ մեծամասնությունն են կազմում, իսկ սրճարաններ/ռեստորաններ այցելելու մշակույթը մեծամասամբ պատկանում է սիրիահայ տղամարդկանց (ժամանցի առանձին ձևերի մեջ յուրաքանչյուր խմբի կշիռը համապատասխանաբար 100%, 90%):
- Տնտեսապես ոչ ակտիվ զանգվածի մոտ ժամանցի տարածված ձևը դեռևս մնում է հեռուստացույց դիտելը, իսկ տնտեսապես/սոցիալապես ակտիվ սիրիահայերը աստիճանաբար զարգացնում են սեփական սոցիալական ցանցը՝ այցելելով հայաստանցի հարազատներին և ընկերներին (ժամանցի առանձին ձևերի մեջ յուրաքանչյուր խմբի կշիռը համապատասխանաբար 100%, 60%):

- Երևանում և մարզերում ժամանցի կազմակերպման պրակտիկաներն էապես տարբերվում են: Ի տարբերություն երևանաբնակ սիրիահայերի՝ մարզերում բնակվողների շրջանում բացակայում են ինտելեկտուալ ժամանցի ձևերն ու սրճարաններ այցելելը, ընկերների կամ հարազատների հետ զբոսնելը, ինչը մեծապես պայմանավորված է մարզերում ժամանցի վայրերի սահմանափակությամբ: Հետևաբար, մարզերում սիրիահայերի ժամանցը պարփակվում է առավելապես հեռուստացույց դիտելով, ընտանիքի անդամների հետ ժամանակ անցկացնելով, երբեմն նաև ազգակիցների տուն այցելություններով:

Ինչպես տեսնում ենք, համայնքային կյանքին բնորոշ ժամանցային պրակտիկաները սիրիահայերի հետ միասին տեղափոխվում են Հայաստան, ծավալվում նույն խնդիրներ ու հետաքրքրություններ ունեցող մարդկանց շրջանակներում: Սիրիահայերի համար ժամանցը կարծես դառնում է նպատակային գործունեություն՝ սակայն ոչ թե նոր միջավայրում նոր սոցիալական կապերի ստեղծմանն ու զարգացմանն ուղղված, այլ հին կապերի վերագնահատմանն ու ամրապնդմանն ուղղված: Ասվածն առավելապես բնութագրական է Հայաստանում բնակվող սիրիահայերի տնտեսապես/սոցիալապես ոչ ակտիվ զանգվածին, միջին տարիքի և իգական սեռի ներկայացուցիչներին: Թեպետ փոքր ծավալով, սակայն սիրիահայերի մոտ առկա է նաև սեփական համայնքից դուրս ազատ ժամանակի կազմակերպման պրակտիկա՝ մասնավորապես որոշակի գործունեություն ծավալող տղամարդկանց շրջանում:

Ժամանցի միջոցով սեփական անձի զարգացմանն ուղղված գործողությունն առավելապես արտահայտվում է նոր միջավայրում որոշ տեսարժան վայրեր այցելելով՝ հարստացնելով հայկական նյութական մշակույթի մասին գիտելիքների պաշարը՝ մի կողմ թողնելով հոգևոր մշակույթը: Սիրիայում գործող բազմաթիվ միություններն այսօր չեն փոխարինվել Հայաստանում գոյություն ունեցող տարաբնույթ մշակութային ու հասարակական կազմակերպություններով, որոնք կնպաստեին սիրիահայերի արագ ինտեգրացիային նոր սոցիալ-մշակութային միջավայրում:

ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ԺԱՄԱՆՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Գայանե Հակոբյան

Բանալի բառեր *– էթնոսոցիոլոգիական հետազոտություն, սիրիահայեր, ժամանց, սոցիալական հարաբերություններ, սոցիալ-մշակութային ինտեգրացիա:*

Հոդվածը նվիրված է սիրիական ճգնաժամի արդյունքում ՀՀ տեղափոխված սիրիահայերի ժամանցի կազմակերպման առանձնահատկություններին: Ժամանցը անձի, խմբի և հասարակության սոցիալական ժամանակի մի մասն է, որը նպաստում է սոցիալական կապերի զարգացմանն ու անձի կատարելագործմանը: Այն նաև նոր սոցիալ-մշակութային միջավայրում ինտեգրացիայի կարևոր գործոն է համարվում:

Սակայն հայաստանյան միջավայրում սիրիահայերն իրենց ազատ ժամանակն օգտագործում են ոչ թե նոր սոցիալական կապերի ձևավորման ու զարգացման, այլ հին կապերի վերագնահատման ու ամրապնդման նպատակով: Սիրիայում գործող բազմաթիվ միություններն այսօր չեն փոխարինվել Հայաստանում գոյություն ունեցող մշակութային ու հասարակական կազմակերպություններով, որոնք կնպաստեին նրանց արագ ինտեգրացիային:

ОСОБЕННОСТИ ОРГАНИЗАЦИИ ДОСУГА СИРИЙСКИХ АРМЯН В РА

Гаяне Акопян

Ключевые слова *- этносоциологическое исследование, сирийские армяне, досуг, социальные отношения, социокультурная интеграция.*

Данная статья посвящена особенностям организации досуга сирийских армян, переехавших в Армению вследствие сирийского кризиса. Досуг - это часть социального времени личности, группы или общества в целом и способствует развитию социальных отношений и личного совершенства. Это также является важным фактором в интеграции новой социально-культурной среды.

Но в Армению сирийские армяне свое свободное время не использует с целью формирования и развития новых социальных отношений, а переоценки и консолидации старых отношений. Многие союзы, существующих в Сирию, сегодня не были заменены культурными и социальными организациями, существующих в Армению, которые будут способствовать их быстрой интеграции.

THE PECULIARITIES OF ORGANIZING LEISURE OF SYRIAN ARMENIANS IN THE RA

Gayane Hakobyan

Keywords - *Ethno-sociological research, Syrian Armenians, leisure, social relations, socio-cultural integration.*

The article is dedicated to the peculiarities of organizing leisure of Syrian Armenians who moved to Armenia during Syrian crisis. Leisure is a part of social time persons, groups and publics which contributes to the development of social relationships and personal perfection. It is also an important factor of integration in the new socio-cultural environment.

But in Armenia, Syrian Armenians in their free time is not used in new social relations of formation and development, other old relationships re-evaluation and consolidation. In Syria many existing Unions today hasn't been replaced in Armenian existing cultural and social organizations that would promote their fast integration.